

7 – 8-րդ դասարաններ

1. Թիվը 4-ի և 8-ի բաժանելուց ստացված մնացորդների գումարը հավասար է 8: Քանի մնացորդ է ստալիս այդ թիվը 8-ի բաժանելիս:
1) 0 2) 3 3) 4 4) 6
2. Գտնել ամենամեծ եռանիշ թիվը, որի թվանշանների գումարը պարզ թիվ է:
1) 995 2) 991 3) 986 4) այլ թիվ
3. 1 արկղ և 27 տուփ աղը կշռում է երեք անգամ ավելի ծանր, քան 1 արկղ և 1տուփ աղը: Որոշել թե քանի տուփ աղ է տեղավորվում մեկ արկղում:
1) 12 2) 10 3) 8 4) 6
4. Քանի՞ թվանշան ունի այն ամենափոքր թիվը, որը բազմապատկելով 9-ով ստացվում է թիվ, որը բաղկացած է միայն 1 թվանշաններից:
1) 2 2) 3 3) 6 4) 8
5. Տրված են 26 թվեր, որոնցից յուրաքանչյուր երկուսի գումարը հավասար է 4-ի: Ի՞նչ առավելագույն արժեք կարող է ընդունել այդ թվերից ամենամեծը:
1) 2 2) 4 3) ցանկացած մեծ արժեք 4) 3
6. 300 –ից մեծ և 800–ից փոքր քանի՞ բնական թիվ կա, որոնք բաժանվում են 7-ի կամ 11-ի:
1) 117 2) 110 3) 176 4) այլ պատասխան
7. A, B և C մարդկանցից յուրաքանչյուրը ճշտախոս է կամ ստախոս: A-ն պնդում է, որ B-ն ստում է: B-ն պնդում է, որ C-ն ստում է, իսկ C-ն իր հերթին ասում է, որ A և B ստում են: Ո՞վ/ովքե՞ր են ճիշտ խոսում:
1) միայն A-ն 2) միայն B-ն 3) A-ն և B-ն միաժամանակ 4) այլ տարբերակ
8. Ամենաշատը ո՞ր թվանշանն է հանդիպում 84-ից մեծ և 145-ից փոքր բոլոր բնական թվերի գրառումների մեջ:
1) 0 2) 1 3) 8 4) 9
9. Քանի՞ բնական թիվ կա, որոնց քառակուսիների թվանշանների գումարը հավասար է 5-ի:
1) 0 2) 1 3) 2 4) անվերջ
10. Գտնել 1440-ի հազարից փոքր բաղադրյալ բաժանարարների քանակը:
1) 31 2) 35 3) 21 4) 36
11. Գտնել 144 և 360 թվերի ընդհանուր բաժանարարների քանակը:
1) 10 2) 11 3) 12 4) 1
12. Որոշել այն բոլոր երկնիշ թվագույգերի քանակը, որոնցից առաջինը երկրորդից մեծ է 4-ով: Օրինակ (37,33) թվագույգը բավարարում է այդ պայմաններին:
1) 90 2) 89 3) 86 4) 87

7 – 8 -րդ դասարաններ

13. Գտնել P պարզ թվերի քանակը, որոնց դեպքում $P+20$ և $P+28$ թվերը նույնպես պարզ են:
1) 1 2) 0 3) 3 4) անվերջ
14. Կենդանաբանական այգու մուտքի տոմսը 300 դրամ էր: Գինն իջեցնելուց հետո այցելուների քանակն ավելացավ կիսով չափ, իսկ եկամուտը մնաց նույնը: Քանի՞ դրամով է իջեցվել կենդանաբանական այգու մուտքի տոմսի գինը:
1) 50 2) 150 3) 200 4) 100
15. Գրքի էջերը համարակալելու համար պահանջվեց 2322 թվանշան: Քանի՞ էջից է բաղկացած գիրքը:
1) 1161 2) 810 3) 711 4) 774
16. x, y, z բնական թվերն այնպիսին են, որ $x + 1/(y+1/z) = 10/7$: Ինչի՞ է հավասար z -ը:
1) 3 2) 7 3) 2 4) 10
17. Վարպետը մեկ օրվա ընթացքում կարող է վերանորոգել հեծանվի 6 կորպուս, կամ 24 անիվ: Առավելագույնը քանի՞ հեծանիվ է վարպետը կարող ամբողջությամբ վերանորոգել 5 օրվա ընթացքում:
1) 5 2) 18 3) 20 4) 12
18. \overline{ab} երկնիշ թվի մասին հայտնի է, որ $\overline{ab} + \overline{ba}$ թիվը 9-ի բաժանելիս տալիս է 5 մնացորդ: Քանի՞ մնացորդ է տալիս \overline{ab} -ն 7-ի բաժանելիս:
1) 2 2) 3 3) 5 4) 7
19. A և B քաղաքներից, որոնց միջև հեռավորությունը 100կմ է, միմյանց ընդառաջ դուրս են գալիս երկու հեծանվորդ, ու շարժվում են համապատասխանաբար 12կմ/ժ և 13կմ/ժ միջին արագություններով: Հենց այդ պահին A քաղաքից հեծանվորդի հետ միաժամանակ դուրս է գալիս շունը և վազում դեպի B քաղաք: Հանդիպելով հեծանվորդին նա փոխում է շարժման ուղղությունը և վազում դեպի A քաղաքը: Կրկին հանդիպելով հեծանվորդի նա ետ է դառնում ու վազում դեպի B քաղաք և այսպես շարունակ, մինչև հեծանվորդներն իրար հանդիպեն: Որոշել թե քանի կմ կվազի շունը, եթե նա վազում է 20կմ/ժ արագությամբ:
1) 48 2) 52 3) 80 4) 100
20. Եռանկյան AB և BC կողմերը համապատասխանաբար իրենց տարված բարձրություններից կարճ չեն: Որքա՞ն է այդ եռանկյան ամենամեծ անկյունը:
1) 30 2) 60 3) 90 4) 120